Արձանագրություն N 5

<<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

28.04.2017թ
ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Ջանջուղազյան
Հանձնաժողովի անդամներ ՝	Ռ. Եղիազարյան/ գնահատող /
	Գ. Գևորգյան /գնահատող/
	Կ. Բայբուրտյան/ բացող /
	Ա. Գրիգորյան/ բացող /
Հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Վասիլյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 1-ին ենթակետի՝ հարցում էր ներկայացվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին,

1.2 <<ՀՀՔՊԿ-ՊԸԾՁԲ-17/4>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված <<ՏԱՄՈ-ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել են որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

1.3 Հանձնաժողովի քարտուղարը ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև գնահատման թերթիկների երկուական օրինակները տրամադրել է ընթացակարգի գնահատող հանձնաժողովին,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Պարզեցված ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Ջանջուղազյան)

2.1 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել պարզեցված ընթացակարգի

առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատման արդյունքները.
Ընտրված մասնակից է ճանաչվում <<ՏԱՄՈ-ՇԻՆ>> ՍՊԸ -ն:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել սույն արձանագրության 2.1 կետում նշված մասնակցին:
3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Ջանջուղազյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 12:00-ին, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ Ա. Ջանջուղազյան

Անդամ՝ Ռ. Եղիազարյան

Գ. Գևորգյան

Կ. Բայբուրտյան

Ա. Գրիգորյան

Քարտուղար Տ. Վասիլյան